ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 40

«13» 05 2022 թ.

ք. Երևան

ՎԱՀԱՆ ԺՈՐԱՅԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Վահան Ժորայի Սարգսյանը ՀՀ դատախազության համակարգում որպես դատախազ աշխատում է 2013 թվականի օգոստոսի 7-ից, նախ՝ որպես Կոտայքի մարզի դատախազության դատախազի, 2015 թվականի մարտի 31-ից՝ նույն դատախազության ավագ դատախազի, 2017 թվականի հունվարի 23-ից՝ ՀՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազի, իսկ 2019 թվականի սեպտեմբերի 26-ից՝ ՀՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազի պաշտոնում: Վահան Սարգսյանը ծառայել է ՀՀ զինված ուժերում:

Վահան Սարգսյանը դատավարական ղեկավարում է իրականացնում ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչությունում նախապատրաստվող նյութերի և քննվող քրեական գործերի նկատմամբ, ինչպես նաև վերահսկողություն է իրականացնում ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնում և Լոռու մարզային քննչական վարչությունում նախապատրաստվող նյութերի, քննվող քրեական գործերի և դատական ակտերի օրինականության նկատմամբ:

Վերջին երեք տարիներին Վահան Սագսյանը ստուգել է 617 նախապատրաստվող նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումների օրինականությունը, որոնցից 10-ով կազմվել են քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը վերացնելու և քրեական գործ հարուցելու մասին որոշումների նախագծեր, 725 քրեական գործերով կայացված վարույթը կասեցնելու կամ կարճելու մասին որոշումների օրինականությունը, որոնցից 17-ով կազմվել են քրեական հետապնդում չիրականացնելու, քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումները վերացնելու մասին որոշումների նախագծեր, 35 քրեական գործերով կազմվել են վճռաբեկ բողոքի նախագծեր, իսկ 19 քրեական գործերով կազմվել են համապատասխան քննչական,

դատավարական և օպերատիվ-հետախուզական գործողություններ կատարելու մասին ցուցումներ: Քննարկել և համապատասխան ընթացք է տվել 831 դիմումի:

Վահան Սարգսյանն իր լիազորություններն իրականացնելիս հայտնաբերել է հանցագործության կատարման մասին տվյալներ և իր որոշմամբ հարուցել 1 քրեական գործ:

Դատավարական ղեկավարման գործերով առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան է ներկայացրել մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումն ընտրելու մասին 19 միջնորդություն, որոնցից 5-ը՝ բավարարվել է, իսկ 14-ը՝ մերժվել: Քրեական 8 գործերով դատարաններում պաշտպանել է մեղադրանք, որոնցից 1-ով կայացվել է արդարացման դատավճիռ:

Վահան Սարգսյանը տիրապետում է հանցագործությունների քննության, քննչական գործողությունների կատարման, մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ դատախազական հսկողության, մեղադրանքի պաշտպանության մեթոդիկային և տակտիկային: Տիրապետում է բնագավառը կարգավորող օրենսդրությանը: Օժտված է կազմակերպչական և ղեկավարման անհրաժեշտ ընդունակություններով, կարգապահ է, պաշտոնեական պարտականությունները կատարում է պատշաճ և բարեխղճորեն, վայելում է աշխատանքային կոլեկտիվի հարգանքը:

ՀՀ դատախազության համակարգում աշխատելու ժամանակահատվածում Վահան Սարգսյանին 2018 թվականին ՀՀ գլխավոր դատախազի հրամանով շնորհվել է արտահերթ դասային աստիճան: Վահան Սարգսյանը կարգապահական տույժեր չունի:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Վահան Սարգսյանի անձնական և մասնագիտական բարձր որակները, ղեկավարվելով «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, 37-րդ հոդվածով, 39-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 2-րդ մասի 2-րդ կետով և 4-րդ մասով, 50-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Անցկացնել ՀՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազ Վահան Սարգսյանի արտահերթ ատեստավորում՝ վերջինիս «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկելու նպատակով:

Ա. ԴԱՎԹՅԱՆ